


ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳԻՐ
ՇԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ
ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳԻՐ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տեղի. ողջ դ. 80
վեցամսեայ 50
ժամ երկրեւր տարեկան Զրաճի 25
վեցամսեայ 14
Թղթասարի ծախք խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղում և
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուի:

ՄԱՔՊԷԹԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Պոլսէն Եւրոպա հասած հեռագիրները
կրէտական խնդիրը կը ներկայացնեն Սուլթան-
նին բաւական տագնապ հայթայթող զօրու-
թեան մէջ: Ռուսիոյ նոր դեռպանը յայտա-
բարած է թէ Զարը կը փափաղի որ Յունաս-
տանի Եօրկիոս իշխանը Կրէտէի կուսակալ
նշանակուի: Սուլթանը կը պատասխանէ թէ
այդպիսի անուանում մը կը հակառակի իր
ժողովրդին բաղձանքներուն — «Թիւրք ժողո-
վրդին բաղձանքները», ահա անուր բացատ-
րութիւն մը միջազգային յարաբերութիւննե-
րու բառգրքին մէջ: — Պ. Զինովիէֆ կը կրկնէ
թէ Սուլթանը աղէկ կընէ եթէ վեց պետու-
թիւններուն ինք առաջարկէ այդ ընտրելու-
թիւնը և ընդունել տայ, հակառակ պարա-
դային մէջ Զարը պիտի պարտաւորուի ինք
ձեռք առնել այդ գործը: Այս յայտարարու-
թեան վրայ Երլազի և Դրան քաղաքագէտ-
ները կսկսին մօրութիւն ձեռք առնել: Գործը
գէշ է. «Մոսկովի մէջ նետուեցաւ»:

Յունանք թէ այս յայտարարութիւնը մահ-
ուան զօղանջն ըլլայ եւրոպական քօնադէմն որ
երկու տարի է ինքն ալ իբր մահուան զօղանջ
մը հնչեց արեւելքի քրիստոնեաներուն:

Հայաստանի աւերումը, հայ ժողովրդին
արիւնին հոսումը, Յունաստանի աւերումն ու
քանդումը ահա այդ քօնադէմն մարդկութեան
պարգեւած բարիքները:

Կրէտական հարցը այսօր կը վերածուի
յունական հարցի, վասն զի Եօրկիոս իշխանին
Կրէտէի կուսակալութեան կոչուիլը ուրիշ բան
չի նշանակեր բայց եթէ մօտաւոր ապագայի
մը մէջ այդ կոչիւնին միացումը Յունաստանի:
Այս առաջարկին հասնելու համար պէտք ե-
ղաւ որ տարի մը Եւրոպա տակնուվրայ ըլլայ,
արիւնը վազէ, աւերումները իրարու վրայ
դիզուին, արեւելքի բարեկարգութիւններու
հարցը շուրջ ինչայ, Սուլթանը առժամայ
փառք մը ստանայ: Եւրոպա դարձաւ դար-
ձաւ նորէն եկաւ հոն ուսկից մեկնած էր.
ահա յոռի շրջանակ մը, ուրկէ դուրս ելլե-
լու ճարը պէտք է գտնել:

Զարին այս անձնական միջամտութիւնը
որուն չէր սպասեր Սուլթանը, տարակոյս չի
կայ թէ բաւական մտահոգութիւն կը պատ-
ճառէ Երլազին նաեւ հայկական խնդրին
համար ալ: Եւրոպական մամուլը արդէն վեց

ամիս առաջ կարծիք յայտնեց թէ ռուսական
քաղաքականութիւնը հայկական դատին նը-
պաստաւոր ուղղութեան մը մէջ պիտի մտնէ,
որուն նշանը եղաւ Բեդրպուրկի Պաշտօնական
Օրագրին «խառնարարներու» ընթացքը պա-
խարակող յայտարարութիւնը. Պ. Զինովիէ-
ֆի Կ. Պոլսի ժամանումը պիտի բանար այդ
քաղաքականութեան վարագոյրը, և ահա յու-
նական խնդրին մէջ Ռուսիոյ նոր ընթացքը
կարծարժէ բոլոր յոյսերը: Ինչ որ քրիստոնե-
աներուն յոյսն է, Երլազին յուսահատու-
թիւնն է: Եւ ահա հեռագիրները մեզի լուր
կը բերեն թէ սուլթանական իրատէ մը մե-
տերս պիտի հրատարակուի, թերեւս մինչեւ
հիմա հրատարակուած ալ ըլլայ, գահացում
տալու համար Օրմանեան Պատրիարքին պա-
հանջումներուն, զոր մեր չորեքշաբթի օր-
ուսան թուով ամփոփեցինք: Այդ պահանջ-
ջումները մեծ բան մը չեն, և Պատրիարքն
ալ անոնց սահմաններէն կերեւի թէ անդին
անցնիլ չէ համարձակած, սակայն ասով մէկ-
տեղ այդ ամենաչնչին առաջարկները իսկ ըն-
դունելու կը դժկամակէր Սուլթանը. և ահա
յանկարծ Մոսկովեան սարսափազդեցիկ գէմ-
քը իբր Մարպէթի ուրուականը կը ներկա-
յանայ, և ահ ու դուր կը տիրէ Վոսիորի
ափունքները, ոմանց «լալ և կրճաւատամանց»
ուրիշներուն խինդ և ուրախութիւն պատ-
ճառելով:

Ինչ որ մենք այս վայրկենիս կը փափա-
գինք այն է որ չիբականանայ Սթանիսլասի
այն չար դուշակութիւնը թէ՛ «Հաւանօրէն
խառնարարական շարժում» մը յանկարծ պայ-
թի Պոլսի սրպէսդի բարեկարգութիւններու
հարցը նորէն գլուխի անդունդը»:

«Լսելու աւանջ» ունեցողները թող լսեն.
հաւերը թերեւս երբեք այդքան նպատակա-
յարմար դորձածութեան մը չէր սահմանուած.
բայց իրաւ է նաեւ որ «աւանջ» ունին և ոչ լսենք
ալ ճշմարտութիւն մըն է: Իյէ՛ թէ խաբուինք
— վերջի ճշմարտութեան համար:

ԿՐԷՏԷ

Կրէտէի Երեսի. ընդհ. ժողովը յայտարարութիւն
մը հանած է որով կը զեկուցանէ որ թէ եւ կրէտա-
կան խնդրոյն լուծումը օսմանեան զօրքերուն անսկի-
զական կերպով և ամբողջապէս կըզիչն հեռանալով
միայն կարելի է, ասոր հետ մէկտեղ եթէ տէրու-
թիւնը այդ բանը անկարելի կը նկատեն՝ կրետայիք
առարկութիւն չպիտի ընեն զօրքերու մաս առ մաս
հեռացումին, պայմանաւ սակայն որ տէրութիւնը ե-
րաջխաւորեն որոշ ու կործ ժամանակամիջոցի մէջ
անոնց ակրողջական հեռացումը:

ՆԱԶԱՐԷԹ ԻՇԽԱՆ

ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Կիլիկիոյ և Հայաստանի օրուան խնդիր-
ներուն և կացութեան վրայ Թարմ հետեւ-
եալ տեղեկութիւնները կը հաղորդէ:

Գեկտեմբեր 24 թուական չրջարեւոյնով մը՝
Հնչակեան կուսակցութեան Լոնտոնի Կեդր. Գով. Թէն Կ. Պոլսոյ դեսպաններուն միջամտութիւնը
խնդրած է ի նպատակ Չէյթլեյի Նազարէթ իշխա-
նին որ օտ. իշխանութեան խաբէութեամբ Մա-
րաշ բերուած և այնտեղ բանտարկուած է՝ Զէյ-
թուցիներուն դրամական նպաստ բաշխած ըլլա-
լուն համար:

Յիշեալ թուականին առաջ, նոյն Գով. Թէն ու-
րիշ չրջարեւոյնով մը Պետութեան պաշտպանու-
թիւնը կը խնդրէ առ հասարակ բոլոր Կիլիկիոյ
համար որոնք տեղական իշխանութեանց կողմէ հա-
րժստահարութիւններու ենթարկուած են, Լոյտի
գործակալ Պրոմօֆօրի ծանօթ միջադէպին հետե-
ւանօր:

Հայկական Նպատասխանող Գանձաժողովին
նախագահ Ուխտաբեկի Պոքսը հետեւեալ նա-
մակը ստացած է Պ. Էտուարտ Միլարտէն որ Գանձ-
աժողովոյ հաշտոյն Հայաստան կը ճամբորդէ նպաստ
բաշխելու համար:

Խարբերդ, 20 դեկտ. 1897

Վսեմատի Միլարտ,

Այստեղ հասնելով սկսող տեղական կացու-
թիւնը խնամով ուսումնասիրել: Հարկ է անդիշա-
պէս հիմնել որքանոց մը հինգ հարիւր որս պատըս-
պարելու համար: Երկու թեան ծախք և այլն կը հաշ-
ուուի 2000 անգլ. ոսկի և պատասխարանի տարեկան
ծախքը՝ 1800: Այն նահանգները ուր արդէն դրա-
մական նպաստ բաշխուած է՝ ճարտարագործութիւ-
նը սկսուած տակու վերակենդանանալ, ոստայնանկ-
ները վերական իրենց աշխատութիւնը և տունե-
րու մեծ մասը շինուեցան ու նորոգուեցան: Արար-
կիր որ ամենէն աւերակ քաղաքներէն մէկն էր,
այսօր է ինքզինքը գտնել: Պէտք է սակայն հասա-
րակութիւնը տեղեկել ըլլայ թէ մեր պահեստի գու-
մարին շատ քիչ բան մնացած է: Թշուառութիւնը
դեռ շատ մեծ է. միջոցներ կը խորհուին կոր որբա-
նոցներու թիւը ստուարացնելու և այլի կիներուն
նպատակներ յատկացնելու որպէս զի հիւսուածագոր-
ծութեամբ և գորգանկարչութեամբ իրենց օրապա-
հիւը հայթայթելու կարող ըլլան:

Տեղական մասնախումբեր կազմուեցան հեռա-
չրջանակներու կացութեան դարման տանելու նպա-
տակով: Խարբերդի ժողովուրդը իր նախաձեռնու-
թեամբ Մասնախումբ մը կազմեց և ամենէն կարօ-
տեալներուն սկսած է նպաստ բաշխել. վերջին եր-
կու շաբթուան մէջ այս նպատակաւ հանգանակու-
թիւն կատարուելով 20 ոսկի հաւարուեցաւ: Նպաս-
տաւանդներուն մէջ կը գտնուի անձ մը որ ժամա-
նակաւ ահագին հարստութեան տէր էր և որ վեր-
ջերս աւուր հացի կարտո մնացած ըլլալով՝ միսիո-
նարներէն մէկ մէհտիէ նպաստ ստացած էր. այս

գումարին մէկ չորրորդը հանեց նպատակաւ տուաւ իրմէ աւելի կարօտեալներուն. ասոր նման շատերու կը հանդիպինք այստեղ որոնք յայտարարեն «Մենք ողորմութիւն չենք ուզեր, դժբաղդ տուէ՛ք մեզի»:

Ատիկա դիւղին մէջ կենդանութեան նշոյն անգամ չէ մնացած, գիւղին 310 տուները բոլորն ալ աւերակ դարձած են: Գիւղին ժողովուրդը փախած Չնքով ապաստանած է ուր թշուառութիւնը մեծ է: Օգնութեան հասնիլ պէտք այս մարդոց որպէսզի յոռաձիկաց գարնան իրենց տունները շինեն և՛ իրենց երկրագործական գործիքները ունենան՝ աշխատութեան վերականգնելու համար. մինչեւ այն ատեն նպաստի պէտք ունին որպէսզի ապրին որովհետեւ իրենց միակ դրամովը այգեգործութիւն և երկրագործութիւն է:

Այս նահագին մէջ 15 գիւղ թէեւ սովի սպառնալիքէն դերձ՝ բայց և այնպէս վերին աստիճանի յուսահատական դրութեան մէջ կը գտնուին: Այս գիւղերուն անհրաժեշտ է նպաստել զգեստ, կերակուր, արջառ, երկրագործական գործիք, սեր, միջոց ևն: Գիւղերէն շատերը քրդական շրջանակներու մէջ գտնուելով, նպաստի բաշխումը ապարդիւն պիտի ըլլայ եթէ զօրաւոր հսկողութիւն մը ի գործ չի դրուի աւարառութիւնները արգելելու համար: Պէտք է ընդունիլ որ գիւղերու ընդհանուր կայսրութիւնը բարեօրոշման ճամբուն մէջ է, բայց մէն մի գիւղի ալքատը շատ աղքատ է և աղքատներու թիւը ստուար է տակաւին:

Կան նաեւ ուրիշ գիւղեր ալ որոնք մասնաւոր պատճառներով դեռ բարեօրոշման ճամբու մէջ չեն կրցած ըլլալ:

Ընդունեցէ՛ք, վսեմապատիւ միջոց, խոնարհ յարգանքներս:

ԵՂՈՒԱՐԴ Ս. ՄԻԼԱՐՏ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ՁԻՆԱՊԱՍՏՆ ԵԳԻՊՏՈՍ

Թոքախտաւորներու քոչկոյնիս, հարուս դասարկապոքներու երանութիւն եւ մակոց գրաստիչիկներու երջանկոյնիս սքող սափուկ եգիպտոս կանկեղանայ կոր:

Ո՛յ փառաբանութիւնն է ասոր պատճառ, ո՛յ Lora Froilpr, ո՛յ Մուսաբա-Բաւե՛լ եւ ո՛յ ա՛յ սք Շիմէ իշխանուհին . . . հանդերձ Ռիկոյի:

Արմաի, բուրգի, ձերմակ էջի եւ սեւ կիկերու, մոմիայի, տահապիէի այս երկիրը՝ փաշտական չգիտեմ ինչ մը ունեւ որով ամենեւնի հրապարիչ երկիրներէն մեկը կը ըլլաւ Նոյեմբերէն Ապրիլ:

Ի՛ր կոյսի պէս անքիծ երկիւնք, մըշտափայլ արեւը եւ գաղջ մթնոլորտը, համեշի կրնէին կեանքի Բոֆի յաճախողներուն որոնք՝ Նեղոսի ափերուն վրայ եւ Շեքրէս օրէջի վերանային սակ կոնակներին սափքներէ կուգային:

Եւ անա՛ 1897-98ի ձմեռը սակե՛ ու վրայ կրնէ աշդ աւանդական սովորութիւնը:

Պիպայի մէջ ձիւն, Աղեփասկերիա կարկոս եւ Գանիթի շարունակ անձրեւ. արդ, ո՞ր մնաց եգիպտոս:

Երբեմն՝ այսիկն միկնել անցեալ տարի, քաջօ հագնելու համար մարդ կամ հիւանդ ըլլալու եւ եւ կամ շատ հարուստ, ձերմակ հագուստ կրողներ կը տեսնուին լոյն իսկ Յունիսի մէջ, բայց այս տարի մուշակապատ անցողիկ կը հանդիպիս փողոցը, տուններու մէջ կրակ կը վառեն, կը դոյնան, լաստիկ կը հագնին, ձեռնոցդ անպակաս կրնեն եւ փրփր կակարմիր կը կտրին: Ասա՞նկ պիտի ըլլաւ եգիպտոս, գեոյէն վար ցուրտ, ո՞ր ու մտէն կանցներ. Սիպերիայի contre-façon մը պարզապէս:

Դար մը վերջը, եթէ ասանկ երթայ, գրաստիչիկները ամառը հոս պիտի գան խամսինով զովանաշու համար:

Ասկէց թերեւս յիսուն տարի ետք Ռիւթեր հեռագրէ Լոնտոն.

Գահիրէ, 3 Յունիս 1948

Նեղոսը սառած ըլլալուն համար Քիչնէր բաշա Խալիլում չի կրցաւ հասնիլ երէկ:

Եգիպտոսի մէջ երբ կը ձիւնէ՝ ալ ամեն քանի կրնանք հաւատարման լոյն իսկ . . . Հաստատելի բարեկրօնողներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ԵՒ

Ա. Ն. Գ. Լ. Ի. Ա.

ՆԱԽԱՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՌ

Անդրկոյ գաղթականութիւններու նախարար Պ. Չեմպրէն Յունուար 20ին Լիվրուլ արտասանած քաղաքական ճառի մը մէջ խօսելով արեւելեան խնդրին վրայ յայտարարեց թէ Հայաստանի կաղութիւնը անտանելի է, և շարունակութիւնը այս վիճակին՝ որ բոլոր պետութիւններուն նախատինք է, այլ եւս ներելի չէ:

Եւրոպական թերթերը շատ կարեւորութիւն կընծայեն այս յայտարարութեան և կը կարծեն թէ Անդրիա ինք միայնակ ձեռք պիտի առնէ Հայաստանի խնդիրը, կարելի եղածին չափ չուտ:

Անդրկոյ բոլոր կուսակցութիւնները միաբան են այս քաղաքականութիւնը պաշտպանելու:

Բրիտանական նախարարները իրենց խորհուրդներուն մէջ մասը միայն կըսեն, կը կարծուի թէ Մայրագոյն-Արեւելքի դժուարութիւններուն շեղում ընելու դիտումով Անդրիա պիտի վերականգնուին Հայկական խնդիրը:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսական մամուլը կը պնդէ որ Եօրկիոս իշխանը Կրէտէի կուսակալ նշանակուի:

—Սպաններու մասնաւոր գումարումի մը մէջ Ձարը յայտարարած է որ Մայրագոյն-Արեւելքի դէպքերը ծանրապէս ճնշած էին իր միաբը, մասնաւոր ձառնի հետ ծագած դժուարութիւնները, բայց հիմա ամէն դժուարութիւն հաղթուած է եղել:

—Ձինական խուժանը Բէաօ-Չէուի մօտ գերման նաւատի մը սպաններ է: Նաւային շոկատ մը ոճրագործութեան վայրը զըրկուել է:

—Պոմպէէն կը հեռագրուի որ ժանտախտը կը սաստկանայ, վերջին շարժումն մէջ մեռնողներուն թիւը 834ի ելած է:

—Աթէնքի մամուլը հրատարակեց գանձային վերահսկողութեան ծրագիրը. բոլոր թերթերը միաբանութեամբ շատ խիստ կը գտնեն զայն:

—Անդրկոյ արտաքին գործերու խորհրդականը յայտարարած է թէ Սուտանի գրաւումով՝ խնդիրը վերջացած չըլլալ:

—Զօլի դատը փետրուար 7ին պիտի

տեսնուի երգուեալ դատաւորներուն ատենին առջեւ: Պ. Զօլա 230էն աւելի վկայ կը հրաւիրէ: Ասոնց մէջ են Հանրապետութեան նախարար Նախագահ Պ. Գաղիմիր Բէրիէ, Նաեւ պատերազմական նախարար զօրավար Պիյօ, և բարձրատիճան սպաններ ու Բարիզի դեւապանտուններէ տնայ քարտուղարները: Փրանսայի մամուլը կը շարունակէ սաստկապէս վիճարանիլ: Հակադէմոկրատիկները կը պահանջեն որ Պ Զօլա դատուի բանակը նախատած ըլլալուն համար, առանց իրաւունք ունենալու իր ամբաստանութիւնները հաստատել: Այնպէս որ Զօլայի բոլոր ըսածները եթէ կատարելապէս ճիշդ եղած ըլլան ինք դարձեալ պէտք է պատժուի:

—Գերմանիոյ կայսեր Սուրբ-տեղերը կատարելիք կրօնաքաղաքական ուխտագնացութեան առթիւ Սուրբմը 10—15 հազար զինուոր պիտի զրկէ եղեր: Այս հիւրընկալ բանակը Պէրութի ճամբով պիտի երթայ Երուսաղէմ:

Պէրութի և Դամասկոսի տեղական իշխանութիւններու պէտք եղած դրամը զրկուած է տեղւոյն զինուորականներուն և ոստիկաններուն նոր հազուատներ չինելու համար: Այսպէսով կուղեն ցուցնել Վիլհէլմ կայսեր թէ թրքական բանակը կարծուածին պէս ցնցոտիներով հազուած զինուորներէ չի բաղկանար:

—Խուլութիւնները կը շարունակուին Կրէտէ: Վարվարօսի մէջ թուրքերը քրիստոնեաներուն վրայ յարձակել են: Նոյնպէս Պիւնիքայի մէջ խուլութիւններ պատահած ըլլալով, ծովակալները կուսակալին խնդրած են փոխել Կրէտէի փոխ-կառավարիչը:

—Տէյրի Բրոնիֆիլ մէջ կը կարգանք թէ Վիլհէլմ կայսրը չբանջաններ տուած է տասը թուրք սպաններու որոնք վերջին թուրքահեղինական պատերազմին մէջ նշանաւոր հանդիսացած են:

ԾԱՂԿԵՄԱՐՏ(1)

ԱՌ ՌԱՏԱՄԵՍ

Իմ կարծիքս, —բայց Հայրիկներ լսէ՛ մանուկներ: Մեր սիրելի Հայրապետը օր մը «Կանանց քարոզ» խօսելով, Գատըգիւղ, կըսէր. «Ինչ են տո՛ւ ծաղիկները . . . դուռներն ալ ծաղիկ կը բուսան . . . »:

Եթէ զվարկի վրայ պէտք չէ ծաղիկ կրել, ըլթակին մէջ երբէք. ի՞նչ կըսես բարի-ծաղիկ:

ԱՆՅՈՐԴ

Համարիտ եմ՝ Ծաղիկմարտի կուսակցութեան այն կողմին որ ծաղիկով եկեղեցի երթալը կը սպառնայ:

Երբ Աստուած մարդկանց հետ խօսելու համար ծաղիկ կը գործածէ իր գեսպանին ձեռքով, օրինակ համար բրիտանական կոյսին «Ողջոյն ընդ քեզ Մարիամ»ի պարագան, բնական է որ մարդիկ ալ Աստուծոյ ներկայացած ատենին ծաղիկ ունենան ի ձեռին կամ ի ըլթակ:

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՎԱՆԵՑԻ Օ.

(1) Ուրբ պատասխան եւս ստացած եմք միեւն ալ, բայց երկայն ըլլալուն եւ նոր բան մը չի պարունակելուն համար չպիտի հրատարակուին:

ԴԱՐԱՎԵՐՁԻԿ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Ա Ռ Ն Ի Ն Ի

ԱՐՄԵՆ 30 տարու) նոր տնտեսացեալ
ԱՐՄԵՆՈՒՀԻ 25 տարու)

(Տեսարանն է Պոլիս . — Թաղը կառնուրիւն չունի . — Փոքրիկ սալօն մը . Տիկինը բազմոցին վրայ ընկողմանած է եւ ամուսինը խփկը, բնականաբար: Բերնով, ձեռնով եւ շքերթով կը խօսակցին.)

Արմեն. — Զեն գիտե՞ր որքան երջանիկ եմ . . .
Արմենուհի. — Հապա ե՞ս . . .
Արմեն. — Եւ ըսել թէ ասկէ քանի մը տարի առաջ ալ կրնայինք այսպէս ըլլալ եթէ . . .
Արմեն. — Զէ, եթէ դուն գիտարահա՞ չըլլայիր:
Արմենուհի. — Ինչ որ է:
Արմենուհի. — Եթէ վիճակդ չիտե՞ր ըլլայիր:
Արմեն. — Բայց գիտե՞ս, զարմանալի թերեւս այս օրուան երջանկութիւնս քու այնքան անդամ՝ զիս մերթերէ կը պարտիմ:
Արմենուհի. — Իրո՞ք:
Արմեն. — Հաստատ, որովհետեւ եթաղքէ թէ, առաջին անգամ՝ քեզ տեսնելուս կամ՝ տառջի անգամ՝ քեզ հետ խօսելուս, խենթի պէս վրաս ցատկէիր եւ թախանձողին, առաջարկութեանս նպատակաւ պատասխան մը տայիր: Վայրկենապէս ուրախ պիտի ըլլայի՝ իրա՞ւ, բայց ետքը, յիշօրէն մտածելով պիտի համոզուէի որ տառնկ պիտի յաղթանակէ մը խափուելու չէի եւ կամայ կամայ աւելի առաջ երթալով յոռետեսութեանս մէջ դուրսէ ձեռքդ խնդրելէ հրաժարելի:
Արմենուհի. — Փիլիսոփայութիւն կրնես կոր:
Արմեն. — Զէ. յետ տնտեսութեան եւ մեղրութեանի *déclaration* մը:
Արմենուհի. — *Merci*.
Արմեն. — Եւ մանաւանդ հիացման արտայայտութիւն մը քու նկարագրիդ հանդէպ:
Արմենուհի. — Բնական է որ առաջին *déclaration* փոքր չէի կրնար հաստատական պատասխան մը տալ. *j'en sais quelque chose*. Օրինակի համար. Գիրքդին հետ անանկ վարուեցայ չեղաւ, կարապետին հետ, ան ալ չեղաւ, Լեւոնին հետ, դարձեալ չի յաջողեցայ, վերջապէս . . . վերջապէս . . . սկզբունքս փոխելու էի . . .
Արմեն. — . . .

ՌԱՏԱՄԵՍ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Հ Ո Գ Ե Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Յառաջիկայ երկուշաբթի, 19/31 յունվար, հանգուցեալ Պողոս Էֆէնտի Կարապետեանի մահուան քառասնօրէին առթիւ, յատուկ պատարագ եւ պաշտօն պիտի մատուցուի քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ:

Պատարագը, զոր պիտի մատուցանէ Առաջնորդական Տեղապահ Հայրը, պիտի սկսուի ժամ 10ին:

Հանգուցելոյն ընտանեաց կողմէ կը ծանուցուի ազգականաց եւ բարեկամաց թէ ներկայս պէտք է իւր հրաւիրագիր նկատուէ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Իրենց ընտանեաց խնդրանոց վրայ կը փնտռուին՝

1. Բնիկ Պօլեցի այլ ի միկիպէ ամուսնացեալ եւ վերջերս անդ փոխանեալ էնֆիլէճի Մ. Յովհաննէս Սերոբէանի օրդին Միլիան՝ 38 տարեկան, միջնաստիկ, սեւահեր, կարմրագոյն եւ սեւաչեւայ:

2. Պոլսոյ Պէշիկթաշ թաղեցի Եղիմիկ խաչիկ բազարատ Եօրտման, որ տասնեւչորս տարին է ի վեր մեկնած է Պոլսէն:

Առաջնորդարանս կը խնդրէ այն ազգայիններէ որ եթէ յեղիպատս կը գտնուին, հաճին ներկայանալ անձամբ կամ գրով յ'Առաջնորդարանս: Նոյնպէս կը խնդրուի այն ամեն ազգայիններէ որ ունենան իրենց խնդրելու երկու անձանց նկատմամբ, հաճին հաշտուիլ Առաջնորդարանի յարեալ նին տնօրինութիւն:

Գահիրէ 10/22 յունուար 1898
(Կնիք Առաջնորդարանի)

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Երկար տարիներէ ի վեր եղիպատսի մէջ հաստատուած Տիար Աստուր Միսաքեան մեռաւ հինգշաբթի օր յ'Ազգաբնակչութեան 59 տարեկան հասակին մէջ: Մեր ցաւակցութիւնները Այլի Տիկին եւ Օր Վ. Միսաքեանի:

ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Գահիրէի մէջ նորահաստատ Զ. Ե. Տ. Իփիքեան եւ ընկ. վաճառատան պետերէն Տիար Սարգիս Թաղարեան մէկ օրինակ Փարոս նուիրած է Գաղտեան փարթարանի ուսանողներուն:

ՀՐԱԽԷՐ ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ

Կիպրոսի մէջ վերջերս հաստատուած Ագարակներու շահագործման ձեռնարկին համար հայ ժիր հողագործներու պէտք կայ, որոնց հետ ընկերութիւնը լաւ պայմաններով կ'ապուրդու տրամադրէ: Ուստի ով որ այս առիթէն օգտուիլ կուզէ կրնայ գիտել ուղղակի առ Տիար Միսաքեան Թաղարեան ի Լառնակայ, (Mr. M. Topjian Larnaca Cyprus) կամ մինչեւ 20 օր Ազգաբնակչութեան ընկերութեան գործակալներէն Տիար Յարութիւն Ջերմակեանի, թէ վ. ֆիլդ բաշա փողոց թիւ 3:

ՏԵՂԱԿԱՆ

Սաքս-Բոպուրի գուքը հինգշաբթի իրիկուն տղուն հետ Գահիրէ հասաւ եւ ուղղակի Հէլուան գնաց: Կայարանը զինքը գիւմնաորելու պացած էին Լորտ Բրոմլըր եւ Գերմանական ընդհանուր հիւպատոս Պ. Ֆոն Միւլլըր եւ Սըր Ֆրանսիս Կրէնֆիլդ:

— Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ խաղաղութիւնը կնքուած ըլլալով Պ. Կոնքարիս, հեղին գիւմնադիտական գործակալաւորը, քիչ օրէն կրկին պիտի ներկայանայ Բարձր. Խտիվին իր յանձնարարականները ներկայացնելու համար:

— Առաջիկայ երեքշաբթի անգլիական զօրքերու նոր խումբ մը ճամբայ պիտի ելլէ Գահիրէէն դէպի Սոււան:

— Հինգշաբթի օր Գերմանիոյ Վիլհէլմ կայսեր ծննդեան 39րդ տարեդարձին առթիւ ընդունելութիւնը տեղի ունեցան Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հիւպատոսարաններուն մէջ:

— Խտիվական շոգենաւային ընկերութիւնը 150,000 անգլ. ոսկոյ փոխարէն իր շոգենաւները եւ շահագործման իրաւունքները ծախած է անգլիական ընկերութեան մը զոր կազմած է Աղեքսանդրիոյ վաճառականներէն Պ. Ալլէն Ալլէքսոն:

Երկուշաբթի օր Նախարարաց Խորհուրդը պիտի վաւերացնէ այս վաճառման գործողութիւնը:

— Էյ Ռայ-Էյ-Ալ թերթին վերաբնուութեան դատը պիտի տեսնուի վաղը, տեղական դատարանին առջեւ:

— Օրիվի պէյ որ զեղծութիւններ ըրած ըլլալու ամբաստանութեամբ դատի ենթարկուած էր, գատուապարտուր է իր պաշտօնին մէջ ատուհան մը կ'ստանայնալ: Այսինքն երկրորդ կարգի քարտուղարութեան իջած է երրորդ կարգի քարտուղարութեան:

— Առաջիկայ փետրուար 1էն սկսեալ թղթ-թատարական պաշտօնատուներ պիտի բացուին ի Մէնչիէ-Էլ-Սաուր (Գահիրէ—Մարիի գիծ) ի Սալամուն, Սալսիլ եւ ի Թանա (Մանսուրա—Մաթարիայի գիծ):

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՑՈՒՄ

Վաղը գիշեր, կիրակի, հայ դերասանական ընկերութիւնը ի նպատակ Պ. Ս. Պէշիկեանի փառաւոր ներկայացում մը պիտի տայ Ալպու խալիլ թատրոնին մէջ:

Ներկայացուելիք խաղն է «Մոնթէ Գրիսթօ»: Աւերորդ է ըսել թէ ատկէ աւելի գեղեցիկ կտոր մը չէին կրնար ընտրել այդ վաղէմի եւ հանրածառ իօթ դերասանապետին ի պատիւ տրուած երեկոյ թի մը համար:

Տարակոյս չկայ որ լեցուն սրտէ մը պիտի ունենայ Պ. Ս. Պէշիկեան եւ արդէն կ'սկսան թէ շատ օթեակներ եւ թիկնաթոռներ ծախուած են:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀՆՈՒՄԻՐՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 29 յունուար. — Սուլթանը բացարձակապէս կը մերժէ Եօրիտ իշխանին ընտրելութիւնը. կը պնդէ որ Կրէտի կուսակալը օտանեան հպատակ ըլլայ:

ԲԵՂԵՐՍ ՊՈԼԻՍ, 29 յունուար. — Կըսուի որ Եօրիտ իշխանին ընտրելութիւնը եթէ չընդունուի Ռուսիա այլեւս չպիտի դադարէ կրէտական խնդրով:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Կուզէ՞ք գիտնալ թէ վերջացող տարւոյն մէջ քանի հաս միլիոնատէր մեռած են Լոնտոն:

Հարկներով կը հաշուին անոնք որ քանի մը միլիոններ թողած են իրենց մահուանէն վերջը:

Պարոն Վինսոն 60 միլիոն ֆրանք թողած է, Պ. Պիպպի 44 միլիոն, Պ. Կըթլըրի 25 միլիոն, Պ. Բալմըր (պիպքիւրի հռչակաւոր գործարանատէրը) 24 միլիոն, Պ. Պառնաթ 24 միլիոն, Սըր Էտ. Պէթս 20 միլիոն, Պ. Բըրքի (Պոլսոյ անգլիական դեսպանին եղբայրը) 18 միլիոն, Պ. Մօրթըն 18 միլիոն, Լէյտի Վալլէս 18 միլիոն, Պ. Նօրս 13 միլիոն, Պ. Կօպլինկ 12 1/2 միլիոն, Պ. Պիքքս 10 միլիոն, ընկերվարական բանաստեղծ մը Ուիլիէմ Մօրիս 1 միլիոն 350,000 ֆրանք թողած է ինչ որ քիչ մը շատ չէ՞ք գտնել բանաստեղծի մը համար:

Մէյ մ'ալ կըսեն թէ գրականութիւնը ապերախտ արհեստ մըն է. . .

Եւրոպայի մէջ կանացի գլխարկները 300 միլիոն ֆրանքի թուոն կ'ապառեն, կը հաւատա՞ք:

Անգլիական տուն մը միայն ամեն տարի իրարու վրայ 400,000 մեղուահաւ (արը գուշու) 5,000 դրախտահաւ եւ 500,000 հատ տարբեր տարբեր թռչուններ բերել կուտայ որոնց փետուրները կանացի գլխարկները կը զարդարեն:

Անցեալ տարի Լոնտոնցի վաճառական մը 800,000 թռչուն ծախած է, որոնք բերել տուած էր Հնդկաստանէն եւ Պրէզիլէն:

Այս հայրենիքը կապալուցանեն թէ կին արարածները կարծուածին չար անօգուտ է- ակներ չեն գոնէ . . . փետուրի վաճառա- կաններուն համար :

Իրաւաբանական խնդիր մը ծագած է վերջերս Թէնէսի (Ամերիկա) դատարանին մէջ որ շատ հետաքրքրական է :

Փաստաբան մը իր պաշտպանեալին դա- տը փաստաբանած պահուն իրաւացնէ ար- ցունքներ թափած է : Հակառակորդ կողմը բողոքած է այդ արցունքի կաթիլներուն դէմ, առարկելով թէ այդ աղի կաթիլները անուշ ազդեցութիւն մը ըրած են դատարաններուն վրայ ի նպաստ իրենց հակառակորդին :

Դատարանը յայտարարած է թէ փա- տաբան մը արտօնեալ է ամեն միջոց գոր- ծածել իր դատը չահելու համար, հետեւա- բար բողոքի տեղի չկար :

Անշուշտ այդ արտօնութիւնը պիտի տըր- ուի կին փաստաբաններու ալ . . . որոնք ա- մեն միջոց պիտի կրնան գործածել դատեր- նին վասակելու համար :

Դատարանը ըլլալը ինչ գեղեցիկ բան է եղեր :

Միլան հրատարակուած վիճակագրու- թեան մը կը տեսնուի թէ Իտալիոյ մէջ 1897ին 920 մենամարտ տեղի ունեցած է որոնց 103ը աղետաւոր վերջաւորութիւն ունեցած են ծանր վէրքեր պատճառելով մենամարտող- ներուն : Այդ 103 մենամարտներէն 15ը զին- ւորականներու միջև պատահած է, 13ը զին- ւորականի և ոչ-զինւորականի :

Մինակ մէկ հոգի մեռած է այդ 103 մենամարտներու հետեւանօք :

Այդ հետաքրքրական վիճակագրութե- նէ կը հաստատենք թէ վիրաւորւողներուն մեծագոյն մասը նոյն իսկ մենամարտի հրաւեր կարգապահները եղած են, ինչ որ կապալու- ցանէ թէ մենամարտը բան մը չապալու- ցանք :


Սաքս-Քոպուրի դուքսը որ այս պահուս- Հէլուան կը գտնուի, վերջերս 35,000 ֆրան- քի շուրթակ մը գնած է Սթրատիվարիուսի պատկանող :

Յայտնի է որ շուրթակներու լաւագոյննե- րը Սթրատիվարիուս կոչուող խաւացիի մը շինածներն են ասկէ գրեթէ դար մը առաջ :

Այդ շուրթակներէն, որոնք հաղուագիւտ են, նշանաւոր հաւաքածոյ մը ունի Պ. Հօլէյ, ամերիկացի մը, որ այդ հաւաքածոյն ձեռք անցընելու համար մինչեւ այսօր 20,000 ոսկի ծախսած է :

ՈՎ ԿԸ ՓԱՓԱՔԻ

Միմիայն 120 դուրս վճարելով, գնել ոսկի, կո- թէն լարուղ, խիստ սիրուն և ընտիր ժամացոյց մը թէ՛ կնոջ և թէ՛ արանց համար, թող զիմէ



Խան Խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձէվահիր վէ- բեայէի մէջ, ուր կը գտնուին նաեւ ամեն տեսակ ոսկի, արծաթ, ոսկեպատ և նիբէլ ժամացոյցներ պատի և քօնսուրի բազմազան ընտիրներ, ինչպէս նաեւ գոհարեղէնք :

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԽԱԳԵԱՆ

ԳԱՀԻԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդ- ները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործա- լաններէն ընտրած թարմ դեղեր, չափաւոր գիններով : Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրու- թեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սքեսիալիթներ : Թարմ հաւնալից ջուրեր, անուշահոտութիւնք եւն. բնաւորական և ժանրադիտական քննութիւնք : Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծա- նօթ ըմբիշներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար : 22-50

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՍԻՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՍՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործու- թեան համեմատ հաստատուած այս լուսանը- կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիններով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ 5-40

Ա. ԼԷԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառա- տունէն Տեարք Յովակիմեան Եղորարք այս անգամ հաս- տատուած են ի Դահլիճ և Մուսթի փողոցը՝ Լաթիֆի գոհարալուծատան զիմաց բացած են վաճառատուն մը ուր կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ֆանելա, գուլպայ և գանազան տեսակ ընտիր շապիկներ, օձիք- ներ, քեւնոցներ :

Ճօրս զանազանութիւն մարօքներէի, հոսեղեցներ, բու և արդուզարդի վերարդերեալ ամեն տեսակ ապրա- նաց : Շեֆիլդի հաշակաւոր պողպատեայ գործիներ, ամեյի, մկրուս, զմեյի եւն :

ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐԻ :

Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշդիւ և փութով կը կատարուին : 19-24

ԼՈՒՍՏԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒՍՏ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագոյններ, եւն. մաքրութիւն, ճշգրտահաշիւներ, և խիստ չափաւոր գին : 16-24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻԷԷՆ ԱՂԵՍՏԱՆԳՐՈՅ ԳԻԾ

Կ Ս Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուգ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32
Թանիս	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30
Թանիս	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—
Ալեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—

ԱՂԵՍՏԱՆԳՐՈՅԷ ԳԱՀԻԷԷԻ ԳԻԾ

Կ Ս Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուգ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ
Ալեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6
Թանիս	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40
Թանիս	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—

ԳԱՀԻԷ-ՍԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԷԶ-ԳԱՀԻԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
Պէնհա	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Զակաղիկ	» 1 34	8 54	Զակաղիկ	» 3 7	8 53
Զակաղիկ	մեկ. 1 44	9 4	» 3 17	9 3	
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	» 4 13	9 47
Սիւէզ կայարան	» —	5 —	» 4 17	9 4	
Տօք (քարափ)	» 6 55	—	Գահիրէ	» 5 5	10 35